# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան 1փող.թիվ 2, Հեռ. (094) 519030 , hatsavan.kotayk@mta.gov.am

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՄԵՍՐՈՊ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ

N 83
*16 մարտ 2021թ.*

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն,Ձեզ եմ ներկայացնում Հացավան համայնքի ավագանու 2021թվականի մարտի 15-ի թիվ 04 հերթական նիստի որոշումները:

Առդիր՝ 26 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խաչատրյան*
*Հեռ./093-212366*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
15 ՄԱՐՏԻ 2021թվականի N 08-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝համայնքի ավագանին

***որոշում է***

Հաստատել Կոտայքի մարզի Հացավան համայնքի ավագանու 2021թվականի մարտի 15-ի թիվ 04 հերթական նիստի օրակարգը:
1. Կոտայքի մարզի Հացավան համայնքի 2020թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:
2. Կոտայքի մարզի Հացավան համայնքի զարգացման ծրագրի վերաբերյալ հաշվետվությունը ի գիտություն ընդունելու մասին:
3.Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՅՐ

ՂԱՐԻԲՅԱՆ ՄՀԵՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ
15 ՄԱՐՏԻ 2021թվականի N 09-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝համայնքի ավագանին

***որոշում է***

1.Հաստատել Կոտայքի մարզի Հացավան համայնքի 2020թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ ***համաձայն հավելվածի***:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՅՐ

ՂԱՐԻԲՅԱՆ ՄՀԵՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՏԱՐԵԿԱՆ

1. Համայնքի անվանումը ՀԱՅԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2. Փոստային հասցե
3. Համայնքային տեղաբաշխման մարզը և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման՝ ԿՈՏԱՅՔ, 207041
4. Համայնքին սպասարկող Գանձապետական ստորաբաժանման անվանումը
5. Համայնքի՝ Գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը
6. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ (համայնքի բյուջե՝ 2)
7. Չափի միավորը՝ *հազար դրամ*

« 15 » Մարտի 2021թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳՍՅԱՆ ՇԱՎԱՐՇ ԱԶԱՏԻ

(Ա. Ա. 2.)

Կ. Տ.

## ՀՀ ֆինանսների նախար, 207041, Հացավան
## Հաշվետվություն
## Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ
## (02/01/20 - 30/12/20թ. ժամանակահատվածի համար)

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի համար | Տարեկան հաստատված պլան Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում վարչական մաս | այդ թվում ֆոնդային մաս | Տարեկան ճշտված պլան Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում վարչական բյուջե | այդ թվում ֆոնդային բյուջե | Փաստացի Ընդամենը (ս.11+ս.12) | այդ թվում վարչական բյուջե | այդ թվում ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300) | | 14,659,400.00 | 14,659,400.00 | 0.00 | 14,659,400.00 | 14,659,400.00 | 0.00 | 18,248,187.70 | 18,248,187.70 | 0.00 |
| 1100 | այդ թվում` 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1140 + տող 1150) | 7100 | 3,178,000.00 | 3,178,000.00 | X | 3,178,000.00 | 3,178,000.00 | X | 4,470,882.70 | 4,470,882.70 | X |
| 1110 | այդ թվում` 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112) | 7131 | 1,550,000.00 | 1,550,000.00 | X | 1,550,000.00 | 1,550,000.00 | X | 2,378,462.70 | 2,378,462.70 | X |
| 1111 | այդ թվում` Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | | 50,000.00 | 50,000.00 | X | 50,000.00 | 50,000.00 | X | 86,502.70 | 86,502.70 | X |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | | 1,500,000.00 | 1,500,000.00 | X | 1,500,000.00 | 1,500,000.00 | X | 2,291,960.00 | 2,291,960.00 | X |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից | 7136 | 1,600,000.00 | 1,600,000.00 | X | 1,600,000.00 | 1,600,000.00 | X | 2,065,920.00 | 2,065,920.00 | X |
| 1121 | այդ թվում` Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | 1,600,000.00 | 1,600,000.00 | X | 1,600,000.00 | 1,600,000.00 | X | 2,065,920.00 | 2,065,920.00 | X |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1130 | 1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող 11302 + տող 11303 + տող 11304 + տող 11305 + տող 11306 + տող 11307 + տող 11308 + տող | 7145 | 28,000.00 | 28,000.00 | X | 28,000.00 | 28,000.00 | X | 26,500.00 | 26,500.00 | X |
| 11307 | Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար | | 10,000.00 | 10,000.00 | X | 10,000.00 | 10,000.00 | X | 10,000.00 | 10,000.00 | X |
| 11312 | Սահմանված սանդղակով կարգին ու պայման-ին համ. համայնքի վարչ. տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվ. համար, բացառ. | | 18,000.00 | 18,000.00 | X | 18,000.00 | 18,000.00 | X | 16,500.00 | 16,500.00 | X |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260) | 7300 | 10,231,400.00 | 10,231,400.00 | 0.00 | 10,231,400.00 | 10,231,400.00 | 0.00 | 10,231,400.00 | 10,231,400.00 | 0.00 |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1251 + տող 1252 + տող 1255 + տող 1256), որից | 7331 | 10,231,400.00 | 10,231,400.00 | X | 10,231,400.00 | 10,231,400.00 | X | 10,231,400.00 | 10,231,400.00 | X |
| 1251 | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | | 10,231,400.00 | 10,231,400.00 | X | 10,231,400.00 | 10,231,400.00 | X | 10,231,400.00 | 10,231,400.00 | X |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390), այդ թվում՝ | 7400 | 1,250,000.00 | 1,250,000.00 | 0.00 | 1,250,000.00 | 1,250,000.00 | 0.00 | 3,545,905.00 | 3,545,905.00 | 0.00 |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334) | 7415 | 350,000.00 | 350,000.00 | X | 350,000.00 | 350,000.00 | X | 359,270.00 | 359,270.00 | X |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ | | 350,000.00 | 350,000.00 | X | 350,000.00 | 350,000.00 | X | 359,270.00 | 359,270.00 | X |
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352+տող 1353), այդ թվում՝ | 7422 | 900,000.00 | 900,000.00 | X | 900,000.00 | 900,000.00 | X | 3,161,635.00 | 3,161,635.00 | X |
| 1351 | Տեղական վճարներ (տող13501+տող13502+տող13503+տող13504+տող13505+տող13506+տող13507+տող13508+տող13509+տող13510+տող13511+տող13512+տո | | 500,000.00 | 500,000.00 | X | 500,000.00 | 500,000.00 | X | 640,770.00 | 640,770.00 | X |
| 13507 | Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար | | 500,000.00 | 500,000.00 | X | 500,000.00 | 500,000.00 | X | 548,770.00 | 548,770.00 | X |
| 1352 | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | | 400,000.00 | 400,000.00 | X | 400,000.00 | 400,000.00 | X | 2,520,865.00 | 2,520,865.00 | X |

# ՀՀ ֆինանսների նախար, 207041, Հացավան
## Հաշվետվություն
## Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ
## (02/01/20 - 30/12/20թ. ժամանակահատվածի համար)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Բաժին | Խումբ | Դաս | Տարեկան հաստատված պլան Ընդամենը (ս.7+ս8) | այդ թվում վարչական բյուջե | այդ թվում ֆոնդային բյուջե | Տարեկան ճշտված պլան Ընդամենը (ս.10+ս11) | այդ թվում վարչական բյուջե | այդ թվում ֆոնդային բյուջե | Փաստացի Ընդամենը (ս.13+ս14) | այդ թվում վարչական բյուջե | այդ թվում ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 |
| 2000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող2100+տող2200+տող2300+տող2400+տող2500+տող2600+տող2700+տող2800+տող2900+տող3000+տող3100) | X | X | X | 17.022.205.40 | 14.659.400.00 | 2.362.805.40 | 17.022.205.40 | 14.659.400.00 | 2.362.805.40 | 15.840.097.90 | 13.523.439.20 | 2.316.658.70 |
| 2100 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2110+տող2120+տող2130+տող2140+տող2150+տող2160+տող2170+տող2180) | 1 | 0 | 0 | 13.248.205.40 | 11.719.400.00 | 1.528.805.40 | 12.985.705.40 | 12.869.400.00 | 116.305.40 | 11.872.208.60 | 11.762.208.60 | 110.000.00 |
| | այդ թվում | | | | | | | | | | | | |
| 2110 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ | 1 | 1 | 0 | 12.961.205.40 | 11.432.400.00 | 1.528.805.40 | 12.298.705.40 | 12.182.400.00 | 116.305.40 | 11.225.808.60 | 11.115.808.60 | 110.000.00 |
| 2111 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | 1 | 1 | 1 | 12.961.205.40 | 11.432.400.00 | 1.528.805.40 | 12.298.705.40 | 12.182.400.00 | 116.305.40 | 11.225.808.60 | 11.115.808.60 | 110.000.00 |
| 2112 | Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ | 1 | 1 | 2 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2113 | Արտաքին հարաբերություններ | 1 | 1 | 3 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2120 | Արտաքին տնտեսական օգնություն | 1 | 2 | 0 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | որից` | | | | | | | | | | | |
| 2121 | Արտաքին տնտեսական աջակցություն | 1 | 2 | 1 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2122 | Միջազգային կազմակերպությունների միջոցով տրամադրվող տնտեսական օգնություն | 1 | 2 | 2 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2130 | Ընդհանուր բնույթի ծառայություններ | 1 | 3 | 0 | 87,000.00 | 87,000.00 | 0.00 | 87,000.00 | 87,000.00 | 0.00 | 86,400.00 | 86,400.00 | 0.00 |
| | որից` | | | | | | | | | | | | |
| 2131 | Աշխատակազմի (կադրերի) գծով ընդհանուր բնույթի ծառայություններ | 1 | 3 | 1 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2132 | Պլանավորման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ | 1 | 3 | 2 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2133 | Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 1 | 3 | 3 | 87,000.00 | 87,000.00 | 0.00 | 87,000.00 | 87,000.00 | 0.00 | 86,400.00 | 86,400.00 | 0.00 |
| 2160 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 1 | 6 | 0 | 200,000.00 | 200,000.00 | 0.00 | 600,000.00 | 600,000.00 | 0.00 | 560,000.00 | 560,000.00 | 0.00 |
| 2161 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 1 | 6 | 1 | 200,000.00 | 200,000.00 | 0.00 | 600,000.00 | 600,000.00 | 0.00 | 560,000.00 | 560,000.00 | 0.00 |
| 2200 | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող2210+2220+տող2230+տող2240+տող2250) | 2 | 0 | 0 | 40,000.00 | 40,000.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2220 | Քաղաքացիական պաշտպանություն | 2 | 2 | 0 | 40,000.00 | 40,000.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2221 | Քաղաքացիական պաշտպանություն | 2 | 2 | 1 | 40,000.00 | 40,000.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2300 | ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ Ե ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ (տող2310+տող2320+տող2330+տող2340+տող2350+տող2360+տող2370+տող2380) | 3 | 0 | 0 | 50,000.00 | 50,000.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2320 | Փրկարար ծառայություն | 3 | 2 | 0 | 50,000.00 | 50,000.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2321 | Փրկարար ծառայություն | 3 | 2 | 1 | 50,000.00 | 50,000.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2400 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2410+տող2420+տող2430+տող2440+տող2450+տող2460+տող2470+տող2480+տող2490) | 4 | 0 | 0 | 200,000.00 | 200,000.00 | 0.00 | -7,500,000.00 | 0.00 | -7,500,000.00 | -6,441,769.00 | 0.00 | -6,441,769.00 |
| 2450 | Տրանսպորտ | 4 | 5 | 0 | 200,000.00 | 200,000.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2451 | Ճանապարհային տրանսպորտ | 4 | 5 | 1 | 200,000.00 | 200,000.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 2490 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | 4 | 9 | 0 | 0.00 | 0.00 | 0.00 | -7,500,000.00 | 0.00 | -7,500,000.00 | -6,441,769.00 | 0.00 | -6,441,769.00 |
| 2491 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | 4 | 9 | 1 | 0.00 | 0.00 | 0.00 | -7,500,000.00 | 0.00 | -7,500,000.00 | -6,441,769.00 | 0.00 | -6,441,769.00 |
| 2500 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 2510+տող2520+տող 2530+տող 2540+տող 2550+տող 2560) | 5 | 0 | 0 | 960,000.00 | 960,000.00 | 0.00 | 960,000.00 | 960,000.00 | 0.00 | 960,000.00 | 960,000.00 | 0.00 |
| 2510 | Աղբահանում | 5 | 1 | 0 | 960,000.00 | 960,000.00 | 0.00 | 960,000.00 | 960,000.00 | 0.00 | 960,000.00 | 960,000.00 | 0.00 |
| 2511 | Աղբահանում | 5 | 1 | 1 | 960,000.00 | 960,000.00 | 0.00 | 960,000.00 | 960,000.00 | 0.00 | 960,000.00 | 960,000.00 | 0.00 |
| 2600 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող2610+տող2620+տող2630+տող2640+տող2650+տող2660) | 6 | 0 | 0 | 360,000.00 | 360,000.00 | 0.00 | 373,000.00 | 373,000.00 | 0.00 | 346,320.60 | 346,320.60 | 0.00 |
| 2640 | Փողոցների լուսավորում | 6 | 4 | 0 | 360,000.00 | 360,000.00 | 0.00 | 373,000.00 | 373,000.00 | 0.00 | 346,320.60 | 346,320.60 | 0.00 |
| 2641 | Փողոցների լուսավորում | 6 | 4 | 1 | 360,000.00 | 360,000.00 | 0.00 | 373,000.00 | 373,000.00 | 0.00 | 346,320.60 | 346,320.60 | 0.00 |
| 2800 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող2810+տող2820+տող2830+տող2840+տող2850+տող2860) | 8 | 0 | 0 | 984,000.00 | 150,000.00 | 834,000.00 | 9,763,500.00 | 17,000.00 | 9,746,500.00 | 8,665,427.70 | 17,000.00 | 8,648,427.70 |
| 2820 | Մշակութային ծառայություններ | 8 | 2 | 0 | 984,000.00 | 150,000.00 | 834,000.00 | 9,763,500.00 | 17,000.00 | 9,746,500.00 | 8,665,427.70 | 17,000.00 | 8,648,427.70 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2823 | Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ | 8 | 2 | 3 | 834,000.00 | 0.00 | 834,000.00 | 9,746,500.00 | 0.00 | 9,746,500.00 | 8,648,427.70 | 0.00 | 8,648,427.70 |
| 2824 | Այլ մշակութային կազմակերպություններ | 8 | 2 | 4 | 150,000.00 | 150,000.00 | 0.00 | 17,000.00 | 17,000.00 | 0.00 | 17,000.00 | 17,000.00 | 0.00 |
| 2900 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+տող2920+տող2930+տող2940+տող2950+տող2960+տող2970+տող2980) | 9 | 0 | 0 | 130,000.00 | 130,000.00 | 0.00 | 130,000.00 | 130,000.00 | 0.00 | 127,910.00 | 127,910.00 | 0.00 |
| 2920 | Միջնակարգ ընդհանուր կրթություն | 9 | 2 | 0 | 130,000.00 | 130,000.00 | 0.00 | 130,000.00 | 130,000.00 | 0.00 | 127,910.00 | 127,910.00 | 0.00 |
| 2921 | Հիմնական ընդհանուր կրթություն | 9 | 2 | 1 | 130,000.00 | 130,000.00 | 0.00 | 130,000.00 | 130,000.00 | 0.00 | 127,910.00 | 127,910.00 | 0.00 |
| 3000 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող3010+տող3020+տող3030+տող3040+տող3050+տող3060+տող3070+տող3080+տող3090) | 10 | 0 | 0 | 300,000.00 | 300,000.00 | 0.00 | 310,000.00 | 310,000.00 | 0.00 | 310,000.00 | 310,000.00 | 0.00 |
| 3070 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 10 | 7 | 0 | 300,000.00 | 300,000.00 | 0.00 | 310,000.00 | 310,000.00 | 0.00 | 310,000.00 | 310,000.00 | 0.00 |
| 3071 | Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) | 10 | 7 | 1 | 300,000.00 | 300,000.00 | 0.00 | 310,000.00 | 310,000.00 | 0.00 | 310,000.00 | 310,000.00 | 0.00 |
| 3100 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎԱԾ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող3110) | 11 | 0 | 0 | 750,000.00 | 750,000.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 3110 | ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ | 11 | 1 | 0 | 750,000.00 | 750,000.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 3112 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 11 | 1 | 2 | 750,000.00 | 750,000.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

## ՀՀ ֆինանսների նախար, 207041, Հացավան

## Հաշվետվություն

## Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ

## (02/01/20 - 30/12/20թ. ժամանակահատվածի համար)

| Տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | Տարեկան հաստատված պլան | | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տողի | | Ընդամենը (ս.5+ս.6) | | այդ թվում՝ | | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում՝ | | Ընդամենը (ս.11+ս.12) | այդ թվում՝ | |
| NN | անվանումները | NN | | վարչական մաս | ֆոնդային մաս | | վարչական մաս | ֆոնդային մաս | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող4050+տող5000+տող 6000) | | 17,022,205.40 | 14,659,400.00 | 2,362,805.40 | 17,022,205.40 | 14,659,400.00 | 2,362,805.40 | 15,840,097.90 | 13,523,439.20 | 2,316,658.70 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 4050 | Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ (տող4100+տող4200+տող4300+տող4400+տող4500+տող4600+տող4700) | x | 14,659,400.00 | 14,659,400.00 | 0.00 | 14,659,400.00 | 14,659,400.00 | 0.00 | 13,523,439.20 | 13,523,439.20 | 0.00 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 4100 | 1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող4110+տող4120+տող4130) | x | 9,358,400.00 | 9,358,400.00 | X | 9,898,400.00 | 9,898,400.00 | X | 9,201,124.00 | 9,201,124.00 | X |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 4110 | ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ (տող4111+տող4112+ տող4114) | x | 9,358,400.00 | 9,358,400.00 | X | 9,898,400.00 | 9,898,400.00 | X | 9,201,124.00 | 9,201,124.00 | X |
| | որից | | | | | | | | | | |
| 4111 | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 8,358,400.00 | 8,358,400.00 | X | 8,178,400.00 | 8,178,400.00 | X | 7,606,909.00 | 7,606,909.00 | X |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4112 | - Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | 4112 | 1,000,000.00 | 1,000,000.00 | X | 1,720,000.00 | 1,720,000.00 | X | 1,594,515.00 | 1,594,515.00 | X |
| 4200 | 1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ (տող4210+տող4220+տող4230+տող4240+տող4250+տող4260) | X | 4,121,000.00 | 4,121,000.00 | X | 4,221,000.00 | 4,221,000.00 | X | 3,784,405.20 | 3,784,405.20 | X |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 4210 | ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ՝ (տող4211+տող4212+տող4213+տող4214+տող4215+տող4216+տող4217) | X | 2,018,000.00 | 2,018,000.00 | X | 2,016,000.00 | 2,016,000.00 | X | 1,931,065.20 | 1,931,065.20 | X |
| | որից՝ | | | | | | | | | | |
| 4211 | -Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր | 4211 | 40,000.00 | 40,000.00 | X | 40,000.00 | 40,000.00 | X | 37,300.00 | 37,300.00 | X |
| 4212 | -Էներգետիկ ծառայություններ | 4212 | 500,000.00 | 500,000.00 | X | 443,000.00 | 443,000.00 | X | 363,265.20 | 363,265.20 | X |
| 4213 | -Կոմունալ ծառայություններ | 4213 | 960,000.00 | 960,000.00 | X | 960,000.00 | 960,000.00 | X | 960,000.00 | 960,000.00 | X |
| 4214 | -Կապի ծառայություններ | 4214 | 138,000.00 | 138,000.00 | X | 193,000.00 | 193,000.00 | X | 190,500.00 | 190,500.00 | X |
| 4215 | -Ապահովագրական ծախսեր | 4215 | 0.00 | 0.00 | X | 0.00 | 0.00 | X | 0.00 | 0.00 | X |
| 4216 | -Գույքի և սարքավորումների վարձակալություն | 4216 | 380,000.00 | 380,000.00 | X | 380,000.00 | 380,000.00 | X | 380,000.00 | 380,000.00 | X |
| 4230 | ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ | X | 767,000.00 | 767,000.00 | X | 327,000.00 | 327,000.00 | X | 326,400.00 | 326,400.00 | X |
| 4232 | -Համակարգչային ծառայություններ | 4232 | 87,000.00 | 87,000.00 | X | 87,000.00 | 87,000.00 | X | 86,400.00 | 86,400.00 | X |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4235 | -Համակարգչային ծառայություններ | 4235 | 240,000.00 | 240,000.00 | X | 240,000.00 | 240,000.00 | X | 240,000.00 | 240,000.00 | X |
| 4238 | -Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 440,000.00 | 440,000.00 | X | 0.00 | 0.00 | X | 0.00 | 0.00 | X |
| 4240 | ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ (տող 4241) | x | 200,000.00 | 200,000.00 | X | 550,000.00 | 550,000.00 | X | 510,000.00 | 510,000.00 | X |
| | որից | | | | | | | | | | |
| 4241 | -Մասնագիտական ծառայություններ | 4241 | 200,000.00 | 200,000.00 | X | 550,000.00 | 550,000.00 | X | 510,000.00 | 510,000.00 | X |
| 4250 | ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր) (տող4251+տող4252) | x | 150,000.00 | 150,000.00 | X | 150,000.00 | 150,000.00 | X | 45,000.00 | 45,000.00 | X |
| 4252 | -Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 150,000.00 | 150,000.00 | X | 150,000.00 | 150,000.00 | X | 45,000.00 | 45,000.00 | X |
| 4260 | ՆՅՈՒԹԵՐ (տող4261+տող4262+տող4263+տող4264+տող4265+տող4266+տող4267+տող4268) | x | 986,000.00 | 986,000.00 | X | 1,178,000.00 | 1,178,000.00 | X | 971,940.00 | 971,940.00 | X |
| | որից | | | | | | | | | | |
| 4261 | -Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 200,000.00 | 200,000.00 | X | 150,000.00 | 150,000.00 | X | 150,000.00 | 150,000.00 | X |
| 4264 | -Տրանսպորտային նյութեր | 4264 | 700,000.00 | 700,000.00 | X | 700,000.00 | 700,000.00 | X | 499,990.00 | 499,990.00 | X |
| 4267 | -Կենցաղային և հանրային սննդի նյութեր | 4267 | 0.00 | 0.00 | X | 155,000.00 | 155,000.00 | X | 154,950.00 | 154,950.00 | X |
| 4268 | -Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 86,000.00 | 86,000.00 | X | 173,000.00 | 173,000.00 | X | 167,000.00 | 167,000.00 | X |
| 4330 | ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ (տող4331+տող4332+տող4333) | x | 0.00 | 0.00 | X | 0.00 | 0.00 | X | 0.00 | 0.00 | X |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4500 | 1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող4510+տող4520+տող4530+տող4540) | | 130,000.00 | 130,000.00 | X | 130,000.00 | 130,000.00 | X | 127,910.00 | 127,910.00 | X |
| 4530 | ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՅԼ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻՆ (տող4531+տող4532+տող4533) | x | 130,000.00 | 130,000.00 | X | 130,000.00 | 130,000.00 | X | 127,910.00 | 127,910.00 | X |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 4531 | - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին | 4637 | 130,000.00 | 130,000.00 | X | 130,000.00 | 130,000.00 | X | 127,910.00 | 127,910.00 | X |
| 4532 | - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին | 4638 | 0.00 | 0.00 | X | 0.00 | 0.00 | X | 0.00 | 0.00 | X |
| 4600 | 1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ (տող4610+տող4630+տող4640) | x | 300,000.00 | 300,000.00 | X | 310,000.00 | 310,000.00 | X | 310,000.00 | 310,000.00 | X |
| 4630 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ) | x | 300,000.00 | 300,000.00 | X | 310,000.00 | 310,000.00 | X | 310,000.00 | 310,000.00 | X |
| 4634 | -Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 300,000.00 | 300,000.00 | X | 310,000.00 | 310,000.00 | X | 310,000.00 | 310,000.00 | X |
| 4700 | 1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ (տող4710+տող4720+տող4730+տող4740+տող4750+տող4760+տող | x | 750,000.00 | 750,000.00 | 0.00 | 100,000.00 | 100,000.00 | 0.00 | 100,000.00 | 100,000.00 | 0.00 |
| 4710 | ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ | x | 0.00 | 0.00 | X | 100,000.00 | 100,000.00 | X | 100,000.00 | 100,000.00 | X |
| 4712 | -Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին | 4819 | 0.00 | 0.00 | X | 100,000.00 | 100,000.00 | X | 100,000.00 | 100,000.00 | X |
| 4770 | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող4771) | x | 750,000.00 | 750,000.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 4771 | -Պահուստային միջոցներ | 4891 | 750,000.00 | 750,000.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| 5000 | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ (տող5100+տող5200+տող5300+տող5400) | x | 2,362,805.40 | X | 2,362,805.40 | 9,862,805.40 | X | 9,862,805.40 | 8,758,427.70 | X | 8,758,427.70 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5100 | 1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող5110+տող5120+տող5130) | x | 2,362,805.40 | X | 2,362,805.40 | 9,862,805.40 | X | 9,862,805.40 | 8,758,427.70 | X | 8,758,427.70 |
| | այդ թվում` | | | | | | | | | | |
| 5110 | ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող5111+տող5112+տող5113) | x | 1,796,500.00 | X | 1,796,500.00 | 8,334,000.00 | X | 8,334,000.00 | 7,235,957.60 | X | 7,235,957.60 |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 1,796,500.00 | X | 1,796,500.00 | 8,334,000.00 | X | 8,334,000.00 | 7,235,957.60 | X | 7,235,957.60 |
| 5120 | ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ (տող5121+ տող5122+տող5123) | x | 566,305.40 | X | 566,305.40 | 1,078,805.40 | X | 1,078,805.40 | 1,072,470.10 | X | 1,072,470.10 |
| 5122 | - Վարչական սարքավորումներ | 5122 | 566,305.40 | X | 566,305.40 | 116,305.40 | X | 116,305.40 | 110,000.00 | X | 110,000.00 |
| 5123 | - Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | 0.00 | X | 0.00 | 962,500.00 | X | 962,500.00 | 962,470.10 | X | 962,470.10 |
| 5130 | ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5131+տող 5132+տող 5133+ տող5134) | x | 0.00 | X | 0.00 | 450,000.00 | X | 450,000.00 | 450,000.00 | X | 450,000.00 |
| 5134 | - Նախագծահետազոտական ծախսեր | 5134 | 0.00 | X | 0.00 | 450,000.00 | X | 450,000.00 | 450,000.00 | X | 450,000.00 |
| 6000 | Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | x | 0.00 | X | 0.00 | -7,500,000.00 | X | -7,500,000.00 | -6,441,769.00 | X | -6,441,769.00 |
| 6400 | ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող6410+տող6420+տող6430+տ | x | 0.00 | X | 0.00 | -7,500,000.00 | X | -7,500,000.00 | -6,441,769.00 | X | -6,441,769.00 |
| 6410 | ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ | 6411 | 0.00 | X | 0.00 | -7,500,000.00 | X | -7,500,000.00 | -6,441,769.00 | X | -6,441,769.00 |

ՀՀ Ֆինանսների նախարար. 207041, Հաղարծին

Համայնքապետարան

Համայնքի բյուջեի հավելուրդի կամ պակասուրդի (Դեֆիցիտի) ֆինանսավորման միջոցները

(02/01/20 - 30/12/20թ. ժամանակահատվածի համար)

| Տողը | | Տարեկան հաստատված պլան | | | Տարեկան ճշտված պլան | | | Փաստացի | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը | այդ թվում | | Ընդամենը | այդ թվում | | Ընդամենը | այդ թվում | |
| NN | | (ս.4 + ս5) | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | (ս.7 + ս8) | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | (ս.10 + ս11) | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| 7000 | ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ) | -2,362,805.40 | 0.00 | -2,362,805.40 | -2,362,805.40 | 0.00 | -2,362,805.40 | 2,408,089.80 | 4,724,748.50 | -2,316,658.70 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| deficit + havelurd | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| expend func - expend econom | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |
| reserve fond | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 |

# ՀՀ ֆինանսների նախար, 207041, Հացավան

## Հաշվետվություն

## քի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի (Դեֆիցիտի) ֆինանսավորման աղբյ

## (02/01/20 - 30/12/20թ. ժամանակահատվածի համար)

| Տողի NN | անվանումները | NN | Տարեկան հաստատված պլան Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում՝ վարչական մաս | ֆոնդային մաս | Տարեկան ճշտված պլան Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում՝ վարչական մաս | ֆոնդային մաս | Փաստացի Ընդամենը (ս.11+ս.12) | այդ թվում՝ վարչական մաս | ֆոնդային մաս |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 8000 | ԸՆԴԱՄԵՆԸ (տող 8100+տող 8300), (տող 7000 հակառակ նշանով) | | 2,362,805.40 | 0.00 | 2,362,805.40 | 2,362,805.40 | 0.00 | 2,362,805.40 | -2,408,089.80 | -4,724,748.50 | 2,316,658.70 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 8100 | Ա. ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (տող 8110+տող 8160), (տող8000-տող8300) | | 2,362,805.40 | 0.00 | 2,362,805.40 | 2,362,805.40 | 0.00 | 2,362,805.40 | -2,408,089.80 | -4,724,748.50 | 2,316,658.70 |
| 8150 | 2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ (տող8161+տող8170+տող8190+տող8201+տող8202+տող8203) | | 2,362,805.40 | 0.00 | 2,362,805.40 | 2,362,805.40 | 0.00 | 2,362,805.40 | -2,408,089.80 | -4,724,748.50 | 2,316,658.70 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 8161 | 2.1. Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն (տող 8162+տող 8163+տող 8164) | | 0.00 | X | 0.00 | 0.00 | X | 0.00 | 0.00 | X | 0.00 |
| 8190 | 2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը (տող 8191+տող 8192-տող 8193) | | 2,362,805.40 | 0.00 | 2,362,805.40 | 2,362,805.40 | 0.00 | 2,362,805.40 | 2,362,805.40 | 0.00 | 2,362,805.40 |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | |
| 8191 | 2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը (տող 8194+տող 8195) | 9320 | 1,221,640.60 | 1,221,640.60 | X | 1,221,640.60 | 1,221,640.60 | X | 1,221,640.60 | 1,221,640.60 | X |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8193 | - Միասնական հաշվում տեղաբաշխված համայնքի բյուջեի ֆոնդային մաս (տող 8191 - տող 8192) | | 1,221,640.60 | 1,221,640.60 | X | 1,221,640.60 | 1,221,640.60 | X | 1,221,640.60 | 1,221,640.60 | X |
| 8194 | 2.3.1.1. Համայնքի բյուջեի վարչական մասի տարեսկզբի ազատ մնացորդ՝ հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ | 9321 | 1,221,640.60 | 1,221,640.60 | X | 1,221,640.60 | 1,221,640.60 | X | 1,221,640.60 | 1,221,640.60 | X |
| 8196 | 2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդը (տող 8197 + տող 8200) | 9330 | 2,362,805.40 | 0.00 | 2,362,805.40 | 2,362,805.40 | 0.00 | 2,362,805.40 | 2,362,805.40 | 0.00 | 2,362,805.40 |
| 8197 | - առանց վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մասհատումների գումարի (տող 8198+տող 8199) | | 1,141,164.80 | X | 1,141,164.80 | 1,141,164.80 | X | 1,141,164.80 | 1,141,164.80 | X | 1,141,164.80 |
| 8198 | Համայնքի բյուջեի ֆոնդային մասի տարեսկզբի ազատ մնացորդ՝ հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ | 9331 | 1,141,164.80 | X | 1,141,164.80 | 1,141,164.80 | X | 1,141,164.80 | 1,141,164.80 | X | 1,141,164.80 |
| 8200 | - վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մասհատումների գումարը (տող 8193) | | 1,221,640.60 | X | 1,221,640.60 | 1,221,640.60 | X | 1,221,640.60 | 1,221,640.60 | X | 1,221,640.60 |
| 8203 | 2.6. Համայնքի բյուջեի հաշվետու միջոցների մնացորդների հավելուրդը (տող8000-տող 8110 - տող 8161 - տող 8170- տող 8190- տող 8201- տող 8202 - տող 8310) | | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | 0.00 | -4,770,895.20 | -4,724,748.50 | -46,146.70 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 ՄԱՐՏԻ 2021թվականի N 10-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով՝համայնքի ավագանին

***որոշում է***

Ընդունել ի գիտություն Հացավան համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը՝համաձայն հավելվածի:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՅՐ

ՂԱՐԻԲՅԱՆ ՄՀԵՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Հացավան
համայնքի ավագանու 2021 թվականի
մարտի 15-ի N 10-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

*ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ*
*2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ*
*ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Հացավան 2021թ

Համայնքի ղեկավար Շավարշ Սարգսյանը համայնքի ավագանուն ներկայացրեց 2020 թվականին ՀԶՀԾ-ի իրականացման ընթացքի մասին

## 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ,ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶՀԾ_Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

*ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ*

Հացավանի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Գյուղի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները Զարգացնել գյուղատնտեսությունն ու անասնապահությունը համայնքում:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

## 2. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հացավան (նախկին Ավդալար) գյուղը հիմնադրվել է 1827թվականին: Եկել են Արևմտյան Հայաստանից և այլ երկրներից: Գյուղը շրջապատված է 3 կողմից բլուրներով,որը գյուղին տալիս է ավելի գեղեցիկ տեսք: Գյուղի հյուսիսային մասում բլուրի վրա պահպանված է հնագույն իշխանական փլատակներ,որը և վկայությունն է գյուղի ավելի վաղ գոյության: Գյուղը խմելու ջուր ստանում է ինքնահոս <<Կոնե>> կոչվող աղբյուրից,իսկ խմելու ջրով ապահովված է բնակչության 80%-ը:Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է,ամռանը՝ շոգ:

Համայնքը ունի միջնակարգ դպրոց, , գրադարան, բուժ.ամբուլատորիա:

Բնակչության թիվը կազմում է 589մարդ, ունի 124 տնային տնտեսություն, 1745.04հա հողատարածք:

Գյուղը Երևանից գտնվում է 17 կմ, իսկ Հրազդանից 54 կմ հեռավորության վրա: Բնակչությունը հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, հողագործությամբ և արտերկրյա աշխատանքներով:Համայնքը գտնվում է ծովի մակարդակից 1400 մետր բարձրության վրա:

Համայնքում բնակլիմայական պայմանները փոփոխական են և ոչ բարենպաստ գյուղատնտեսության համար: Դաշտերը ոռոգովի չեն և բերքատվությունը մեծ կախում ունի տարվա տեղումներից: Ձմեռը ցուրտ է, բքաշունչ: Ամառը զով, երբեմն էլ շոգ ու երաշտ: Համայքնում գարունը ուշ է բացվում, աշունը շուտ վերջանում: Գարնանը լինում են տեղատարափ անձրևներ, կարկուտ, երբեմն կարկուտի պատճառով գյուղացին կորցնում է բերքի մի մասը:

### 2.1 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հացավան համայնքում ապրում է 589 բնակիչ,որոնցից տղամարդիկ կազմում են 51%-ը:

Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները
(01.01.2021թ. դրությամբ)

| Հ/Հ | Ցուցանիշները | Ընդամենը | Կանայք | Տղամարդիկ |
|---|---|---|---|---|
| 1. | Համայնքի բնակչության թիվը, այդթվում՝ | 589 | 290 | 299 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մինչև 1 տարեկան | 5 | 3 | 2 |
| | 1-2 տարեկան | 15 | 9 | 6 |
| | 3-4 տարեկան | 14 | 7 | 7 |
| | 5-6 տարեկան | 6 | 3 | 3 |
| | 7-10 տարեկան | 27 | 15 | 12 |
| | 11-14 տարեկան | 18 | 9 | 9 |
| | 15-17 տարեկան | 13 | 6 | 7 |
| | 18 և ավելի տարեկան | 491 | 238 | 253 |
| 2. | Կենսաթոշակառուներ(ներառյալ հաշմանդամներ)այդ թվում՝ | 65 | 38 | 27 |
| | Տարիքային և աշխատանքային | 350 | 160 | 190 |
| 3. | Միակողմանի ծնողազուրկ երեխաներ | 1 | - | 1 |
| 4. | Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ | - | - | - |
| 5. | Հաշմանդամ երեխաներ | - | - | - |
| 6. | Խնամակալության հանձնված երեխաներ | 0 | - | 0 |
| 7. | Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ | 1 | - | 1 |
| 8. | Արցախյան պատերազմի մասնակիցներ | 1 | | 1 |
| 9. | Հաշմանդամներ | 4 | 2 | 2 |
| 10. | Զբաղվածներ | 200 | 90 | 110 |
| 11. | Գործազուրկներ | 247 | 180 | 67 |
| 12. | Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը | 7 | | |
| 13. | Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը | 2 | | |

Համայնքն ունի 124 տնային տնտեսություն: Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Տղամարդկանց աշխատունակ մի մասը զբաղված է արտագնա աշխատանքով: Վերջին տարիներին նկատվում է ծնելիության աճ:

## 2.2 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հացավան համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 5 անդամներով:Հացավան համայնքի աշխատակազմը բաղկացած է 3 աշխատակցից:
Համայնքապետարանն ունի վարչական շենք,որը մասնակի վերանորոգված է: Այն գտնվում է Հացավան համայնքի սկզբնամասում:Աշխատակազմի աշխատանքի կատարման համար ստեղծված են անհրաժեշտ

պայմաններ,համայնքապետարանը հագեցած է տեխնիկայով,որը լիովին բավարար է աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար:

## 2.3 ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հացավան համայնքում օրինականացվել են ինքնակամ կառույցներ:2020 թվականին տրվել է ճարտարապետահատակագծային առաջադրանք:Համայնքում աղբահանությունը կատարվում է Գառնի համայնքի կողմից: Հա մայնքում շաբաթական մեկ օր իրականացվում է աղբահանության աշխատանքները:

Խմելու ջրի ներհամայնքային համակարգը գտնվում է լավ վիճակում:

Համայնքում փողոցային լուսավորություն առկա է 80%: Համայնքը ամբողջովին գազաֆիկացված է:

## 2.4 ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայքնում կա 162 բնակելի տուն,29506քմ տարածքով,1 հանրակացարանի շենք:

## 2.5 ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Հացավան համայնքի վարչական տարածքը կազմում է 1813 հա,որից գյուղատնտեսական նշանակություն ունեն 1674.19հա-ը,բնակավայրերը զբաղեցնում են 49.18հա, արդյունաբերական,ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտները՝6.0հա,էներգետիկայի,տրանսպորտի,կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտները՝4.63հա,հատուկ պահպանվող տարածքները՝10.87հա, ջրային հողերը՝ 0.17հա,պետական սեփականություն հանդիսացող հողերը՝14.52հա:

## 2.6 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հացավան համայքնում գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղված են այգեգործությամբ և անասնապահությամբ,ընհանրապես գյուղատնտեսության բնագավառում զբաղված է համայնքի բնակչության 50%-ը: Հողերի մի մասը համարվում են ոռոգելի հողատարածություններ:Ոռոգման ջուր մատակարարվում է Գառնի ՋՕԸ-ի կողմից: Գյուղատնտեսական աշխատանքները կազմակերպելու համար համայնքում առկա է 5 տրակտոր,6 բեռնատար մեքենաներ,3 կցասայլեր,1 ծամլիչ-քարդրծիչներ,2 գութան,1 կուլտիվատոր:

<u>ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԱՆԱՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԸ</u>

| Հ/Հ | Ցուցանիշները | 01.01.2021 դրությամբ |
|---|---|---|
| 1. | Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը,որից՝ | 484 |
| | Կովեր | 204 |
| 2. | Խոզերի գլխաքանակը | 116 |
| 3. | Ոչխարների գլխաքանակը | 1151 |
| 4. | Ավանակների և ջորիների գլխաքանակը | - |
| 5. | Ձիերի գլխաքանակը | 9 |
| 6. | Հավերի և այլ թռչունների գլխաքանակը | 667 |
| 7. | Մեղվաընտանիքների քանակը | 79 |

## 2.7 ԲՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Համայնքում աղբահանության գործընթացն իրականացվում է շաբաթական մեկ անգամ Գառնի համայնքի կողմից: Համայնքում ոռոգման ջուրը մատակարարվում է Գառնի ՋՕԸ-ի կողմից:
Համայնքում չկան անտառապատ տարածքներ,ջրավազններ և հատուկ պահպանվող տարածքներ:
2020 թվականին համայնքի տարածքում կատարվեց ծառատունկ,որը պետք է կրի շարունակական բնույթ:
Սակայն համայնքում բնության և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում դեռևս պետք է կատարել հետևյալ միջոցառումները՝
Ավելացնել համայնքի կանաչապատ տարածքները,կառուցել խաղահրապարակ:Համայնքի փողոցներում իրականացնել ծառատունկ,ավելացնել համայնքի կանաչապատ տարածքները,ներգրավել համայնքի բնակչությանը բնապահպանական խնդիրների լուծման գործընթացում:

## 2.8 ՏՐԱՆՍՊՈՐՏ,ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հացավան համայնքն ունի 6 կմ երկարությամբ ներհամայնքային ճանապարհներ,և փողոցներ,որից 2.5 կմ ասֆալտապատ են,չնայած ունեն վերանորոգման կարիք:Համայնքի փողոցները համարակալված են անհրաժեշտ ցուցանակներով:

## 2.9 ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հացավան համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի կողմից:Համայնքում գործում է մեկ խանութ /ԱՁ Նմնացական Սահակյան/,զբաղվածների թիվը 1 մարդ:

## 2.10 ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հացավան համայնքում գործում է հանրակրթական միջնակարգ 1 դպրոց:Դպրոցը ջեռուցվում է գազի անհատական ջեռուցման համակարգով:Համայնքն ունի մանկապարտեզի շենք,որը չի գործում,գտնվում է անմխիթար վիճակում:

**Հացավան համայնքի հանրակրթական դպրոցի վերաբերյալ ցուցանիշներ**

| Հ/հ | Հաստատության անվանումը | Աշխատողների թիվը | Սովորողների թիվը |
|---|---|---|---|
| 1 | <<Հացավանի Հայկ Մանուկյանի անվան միջն.դպրոց>> ՊՈԱԿ | 23 | 57 |

Հացավան համայնքում գործում է առողջության առաջնային պահպանության մեկ կազմակերպություն՝Հացավանի ԱԱՊԿ: Այն գտնվում է համայնքապետարանի շենքի 1-ին հարկում,այն ունի վերանորոգման կարիք,ապահոված չէ ջեռուցման համակարգով:

## 2.11 ՄՇԱԿՈՒՅԹ

Հացավան համայնքն ունի Մշակույթի տուն,որը չի գործում այս պահին կատարվում են վերանորոգման աշխատանքներ:Համայնքապետարանի 1-ին հարկում գտնվում է համայնքի գրադարանը,որտեղ կա շուրջ 5882 կտոր գրականություն և տարեկան գրքեր սպասարկում է մոտ 5 ընթերցող:Համայնքն ունի www.hacavan.am ինտերնետային վեբ կայքը,որտեղ տեղ է գտնում համայնքային նորությունները,համայնքում իրականացվող բոլոր միջոցառումները,համայնքի ղեկավարի,համայնքի ավագանու կողմից կայացված բոլոր որոշումները,կարգադրությունները,համայնքի բյուջեի եկամտային և

ծախսային մասերը և դրանց տնօրինումն ըստ կատարման ժամկետների,ինչպես նաև հայտարարություններ:

## 2.12 ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ,ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ,ՍՊՈՐՏ

Հացավան համայնքում գործում է մեկ բուժամբուլատորիա,որտեղ աշխատում է 1 բուժքույր:
Այն գտնվում է համայնքապետարանի շենքի 1-ին հարկում,ունի վերանորոգման և ջեռուցման համակարգի կառուցման կարիք:
Քայլեր են ձեռնարկվում համայնքում տարաբնույթ սպորտային խմբակներ կազմակերպելու ուղղությամբ: Համայնքի տարածքում սպորտդահլիճներ, առկա է միայն դպրոցում,սակայն սպորտդահլիճում պակասում՝է համապատասխան գույքը:

## 2.13 ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Քանի որ համայնքի տարածքում չկան գործող գործարաններ կամ արտադրամասեր,ուստի բնակչությունը աշխատանք է փնտրում հիմնականում Երևան քաղաքում:
Համայնքում չկան աշխատանքի և սոցիալական ծառայության գործակալություններ: Համայնքապետարանն իր հնարավորությունների սահմաններում դրամական օգնություն է ցուցաբերում սոցիալապես անապահով ընտանիքներին:

## 2.14 ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքապետարանը ստեղծել է իր պաշտոնական վեբ կայքը՝www.hacavan.am,որի նպատակը բնակչությանը համայնքի կառավարման վերաբերյալ իրազեկումն է <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքով ամրագրված հրապարակայնության և թափանցիկության ապահովումը,տեղական իշխանություն-բնակչություն կապի ամրապնդումը և բնակչության շրջանում տեղական իշխանության նկատմամբ վստահության բարձրացումը:

## 2.15 ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

1. Համայնքում խմելու և ոռոգման ջրի ցանցի կառուցում
2. Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում և ասֆալտապատում, փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում
3. Համայնքի մշակույթի տան կապիտալ վերանորոգումը և մշակութային կյանքի աշխուժացումը,
4. Համայնքապետարանի շենքի վերանորոգում:
5. Դպրոցի ցանկապատում:

Այս նպատակների իրականացման համար անհրաժեշտ է ապահովել համայնքի համամասնական զարգացումը,տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման,ոչ հարկային եկամուտների,տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություն:
Նպաստել ձեռներեցության խթանմանը՝այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ պահպանել համայնքի ճարտարապետության արդի ոճը՝բացառել ինքնակամ շինարարությունը և ապօրինի հողազավթումները:Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի,դոնոր կազմակերպությունների,հասարակական և բարեգործական կազմակերպություններ,անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը:Սերտորեն համագործակցել համայնքի բնակչության հետ:Նպաստել համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը՝ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները,զարգացնելով առևտրի և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը:

Համայնքի զարգացման 2018-2022 թթ.ծրագրի հիմնական նպատակներն են՝ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ,ունենալ մաքուր շրջակա միջավայրով համայնք՝չախտոտելով բնության և շրջակա միջավայրի սանիտարահիգենիկ վիճակը:

## 2.16 ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

Համայնքի բյուջեի մուտքերը,կարելի է ասել,ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին,2020 թվականին պետական բյուջեից սուբվենցիայի ստացման հայտ է ներկայացվել և իրականացվել է համայնքի Մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքներ:
Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝հարկերի,տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների,ծառայությունների մատուցումից ստացված մուտքերի հաշվին:

2020թվականին համայնքի բյուջեի փաստացի մուտքերը կազմել են 18248.2 դրամ,այդ թվում՝

| | |
|---|---|
| 1. Հողի հարկ - | 2291.9 |
| 2. գույքահարկ - | 2152.4 |
| 3.տուրքեր - | 26.5 |
| 4. Այլ եկամուտներ - | 3545.9 |
| Հողի իրացումից մուտքեր - | 6441.8 |
| Պաշտոնական դրամաշնորհներ - | 10231.4 |

2020 թվականի համայնքի բյուջեի եկամուտների մեջ սեփական եկամուտները կազմել են 8016.8 դրամ

### 2020 թվականի համայնքի բյուջեի ծախսերի կատարողականը

| | |
|---|---|
| Ընդհանուր ծախսեր - | 13523.4 |
| 1. Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ - | 11872.2 |
| 2. Տնտեսական հարաբերություններ - | 6441.8 |
| 3. Շրջակա միջավայրի պաշտպանություն - | 960.0 |
| 4. Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն - | 346.3 |
| 5. Հանգիստ,մշակույթ,կրոն - | 7814.3 |
| 6. Կրթություն - | 127.9 |
| 7. Սոցիալական պաշտպանություն - | 310.0 |

### Ինչ տեսակի ծախսեր են կատարվել 2020 թվականի համայնքի բյուջեի հաշվին

1. Աշխատանքի վարձատրություն - 9201.1
2. Ծառայություններ և ապրանքների ձեռքբերում - 3784.4
3. Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին - 127.9
4. Սոցիալական նպաստներ - 310.0
5. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր - 8758.4
   այդ թվում՝
   1. Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում - 7235.9
   2. Նախագծահետազոտական ծախսեր - 450.0
   3. Վարչական սարքավորումներ- 110.0
   4. Այլ մեքենաներ և սարքավորումներ- 962.5

Համայնքի ղեկավար՝ Շավարշ Սարգսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

15 ՄԱՐՏԻ 2021թվականի N 11-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի և Հայաստանի Հանրապետությոան կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝հիմք ընդունելով միջգերատեսչական հանձնաժողովի 2021թվականի փետրվարի 22-ի թիվ 21 դրական եզրակացությունը՝համայնքի ավագանին

***որոշում է***

Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությունը և փոփոխել Հացավան համայնքի վարչական տարածքում գտնվող քաղաքացու սեփականությունը հանդիսացող /կադաստրային ծածկագիր 07-041-0110-0021/ 0.56867 հա հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական նշանակությունից բնակավայրերի նշանակության /հասարակական կառուցապատում գործառնական նշանակությամբ/:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՐԱՅՐ

ՂԱՐԻԲՅԱՆ ՄՀԵՐ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ